

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

սլետական համալսարանի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1031 Լ/Կ հրամանի

### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

«ԴԱՍԱԽՈՍԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ» ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 4 25.04.2019թ.

Վանաձոր

2015 թ.

## **1. Ընդհանուր դրույթներ**

1.1 «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Դասախոսը ուսանողների աչքերով» ուսանողական հարցման կանոնակարգը (այսուհետև՝ Կանոնակարգ) սահմանում է Համալսարանի ուսանողության կողմից Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի (ասիստենտ, դասախոս, դոցենտ, պրոֆեսոր) դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգն ու պայմանները:

1.2 Կանոնակարգով սահմանված հարցման նպատակն է պարզել Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակը և արդյունավետությունը, որպեսզի մշակվեն և ներդրվեն մեխանիզմներ տեղ գտած սխալները և թերությունները շտկելու, դասավանդման որակը և արդյունավետությունը բարձրացնելու համար:

1.3 Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28 հոդվ. 4-րդ մասի պահանջների հիման վրա և համարվում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակն ու արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.4 Կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում Համալսարանի գիտական խորհրդը:

## **2. Ուսանողական հարցման անցկացումը**

2.1 Ուսանողական հարցումն իրականացվում է պարտքերի մարմանը հաջորդող ամիսներին այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է դասախոսը: Ավարտական կուրսերում երկրորդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ավարտական որակավորման քննությունների սկիզբը:

2.2 Հարցումներն իրականացվում են տվյալ առարկայի յուրաքանչյուր ամփոփիչ ստուգումից հետո:

2.3 Հրավիրված դասախոսների համար հարցում անցկացվում է Համալսարանում առնվազն մեկ տարի աշխատելուց հետո:

2.4 Ուսանողական հարցումը կազմակերպվում է «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող հանձնախմբի (կազմը վավերացվում է ռեկտորի հրամանով) և ուսումնամեթոդական վարչության կողմից, դեկանատների օժանդակությամբ:

2.5 Ուսանողական հարցումն անցկացվում է Կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (Ձև 1)՝ 5 միավորանոց սանդղակով: Ուսանողական հարցումն անանուն է:

2.6 Ուսանողական հարցումն անցկացվում է դասերի հաշվին: Հարցաթերթերը ստորագրվում են հարցումն անցկացնողների կողմից:

2.7 «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող անդամներին միանում է նաև տվյալ դասաժամի դասախոսը:

2.8 Հարցաթերթերի բաժանումը, հավաքումը և ուսումնամեթոդական վարչությանը հանձնումը վավերացվում է ստորագրություններով (Ձև 2):

### **3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը**

3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ուսումնամեթոդական վարչության կողմից:

3.2 Գնահատման հարցաթերթերը ուսումնամեթոդական վարչությունում պահվում են 5 տարի, որից հետո սահմանված կարգով ոչնչացվում են:

### **4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը**

4.1 Ուսանողական հարցման արդյունքների ամփոփաթերթը ուսումնամեթոդական վարչությունը յուրաքանչյուր ուստարվա վերջում ներկայացնում է համապատասխան ամբիոնին:

4.2 Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և խորհուրդներ՝ ուղղված տվյալ դասախոսի դասավանդման որակի բարելավմանը և բացահայտված տարաբնույթ թերությունների շտկմանը: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստում: Քննարկումից մեկ ամիս հետո ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչը ներկայացնում է ցածր միավորներ հավաքած դասախոսների դասավանդման որակի բարելավմանն ուղղված քայլերը, արդյունքները:

4.3 Դասախոսն իրավունք ունի ուսումնամեթոդական վարչությունում ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող ամփոփ արդյունքին:

4.4 Մրցույթների ժամանակ հարցման արդյունքները տրամադրվում են մրցութային հանձնաժողովին:

4.5 Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ֆակուլտետում:

4.6 Ուսանողական հարցման ընդհանուր ամփոփ արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում:



Գ	14	Դասընթացի վարման գործընթացում խրախուսում է սեփական կարծիքը արտահայտող և հիմնավորող ուսանողին:																	
Գ	15	Մղում է ինքնակրթության:																	
Գ	16	Խրախուսում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:																	
Գ	17	Հետևում է լսարանի կարգապահությանը:																	
Գ	18	Լսարանից դուրս ուսանողի հետ շփվելու /կրթական հարցեր/ հնարավորություն է տալիս /էլ. փոստ, խորհրդատվական ժամ, անցանց և այլն/:																	
Գ	19	Ունի սահուն խոսք, արտասանությունը պարզ է:																	
Գ	20	Բարյացակամ է և հարգալից ուսանողի հանդեպ:																	
Գ	21	Գնահատման ժամանակ օբյեկտիվ է:																	
Գ	22	Օրինակելի է իր պահվածքով:																	
Գ	23	Ժեստերը և միմիկան հաճելի են:																	
Գ	24	Ունի դասախոսին վայել հագուկապ:																	
		<i>Ընդամենը</i>																	

*Ընտրված տարբերակի հերթական համարն առե՛ք շրջանակի մեջ:*

- Դ 1. Կուրսը. 1. I 2. II 3. III 4. IV 5. V  
Ե 2. Ֆակուլտեր.

Ձեր առաջադիմությունը 1. Գերազանց 2. Լավ 3. Բավարար

Առաջարկություններ

---



---



---



---



---



---



---



---



---



---

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման վերաբերյալ**

Հարցումն իրականացվել է \_\_\_\_\_ մասնագիտության

(մասնագիտությունը)

\_\_\_\_\_ կուրսում

\_\_\_\_\_ ուսանողների մասնակցությամբ:

(կուրսը)

(ուսանողների թվաքանակը)

Հարցումը կատարվել է ներքոհիշյալ դասախոսների համար.

h/h	Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը	Ամբիոնը
1.		
2.		
3.		
4.		
5.		

« \_\_\_\_\_ » 201 թ.

(ամսաթիվ, ամիս)

«Դասախոսը ուսանողների աչքերով»

սոցիոլոգիական հարցումն անցկացնող

հանձնախմբի անդամ \_\_\_\_\_

(ստորագրություն)

\_\_\_\_\_ (ազգանուն, անուն)